<<Շիրակի ուսուցիչների միություն գիտակրթական կենտրոն >> ՀԿ

վերապատրաստող կազմակերպություն

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Առցանց դպրոցը կրթական կարևոր ռեսուրս

Առարկա- Պատմություն

Դպրոց՝Գյումրու Ակադեմիական վարժարան ՊՈԱԿ-ի

Ուսուցիչ՝ Անի Ալիկի Պողոսյան

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

Գյումրի 2023

Բովանդակություն

Ներածություն----------3-4

Գլուխ առաջին: Առցանց դպրոց բացելու հմտությունների ձևավորման անհրաժեշտությունը ----------5-12

Գլուխ երկրորդ: **Առցանց դպրոցի իրականացման պլանը և կայքի բաժինները -----**----------13-14-

Եզրակացություն---------- 15

Օգտագործված գրականություն----------16

Ներածություն

Սույն հետազոտական աշխատանքը առցանց դպրոց բացելու հմտություններ մշակելու մասին է, բազմաֆունկցիոնալ կրթական հարթակի, որը համախմբելու է որակյալ կրթությամբ մտահոգ մարդկանց մի մեծ թիմի:

Առցանց դպրոց բացելու հմտությունների անհրաժեշտությունն առավել տեսանելի դարձավ 2020 թվականից, երբ համավարակի պայմաններում ստիպված եղանք կրթական գործընթացը կազմակերպել հեռավար սկզբունքով՝ բախվելով մի շարք խնդիրների և անհարմարությունների հետ, սակայն, այդ պահից ետ, թերևս, հայկական իրականության մեջ կոտրվեց այն կարծրատիպը, որ որակյալ կրթություն հնարավոր է ստանալ միայն դասարանում:

Մենք այժմ մշակում ենք հմտություններ, թե ինչպես ստեղծել ապագայի դպրոցի՝ մեր մշակած մոդելը, որը նախատեսում ենք վերածել կրթական և տեղեկատվական իրական դարբնոցի: Առցանց դպրոցի գործունեության արդյունքում ակնկալվում է ստեղծել այնպիսի կրթական հարթակ, որն իր շուրջն է միավորելու բոլոր նրանց, ովքեր նախընտրում են ուսումնական գործընթացից առավել հաճույք ստանալ՝ այն վերածելով սիրելի և օգտակար զբաղմունքի:

Մեր առաքելությունն է՝ առավել երջանիկ դարձնել երեխայի մանկությունը՝ դրանով իսկ նախանշելով նրա կյանքի հաջող ընթացքը:

Հետազոտական աշխատանքը նախատեսում է զարգացնել առցանց հարթակի ստեղծման հմտություններ հասարակության տարբեր շերտերի համար՝ բոլորին տալով կրթվելու հավասար հնարավորություն:

Հետազոտական աշխատանքի նպատակը և խնդիրները.

- Կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման առավել հարմարավետ պայմանների ստեղծման հմտությունների զարգացում,
- «Հավասար կրթություն բոլորի համար» սկզբունքի կիրառում,
- Մանկավարժական փորձի, գիտելիքների և մեթոդիկայի պահպանում, տարածում,

- Մարդկանց տարբեր խմբերի ներգրավում՝ անկախ տարիքից, բնակության վայրից, ֆիզիկական հնարավորություններից, սոցիալական պայմաններից և ֆինանսական վիճակից,
- Աշակերտների ինքնուրույնության, աշխատանքի արդյունավետության բարձրացում,
- Նորագույն կրթական տեխնոլոգիաների ներդրում,
- Կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ ծախսերի կրճատում,
- Կրթական ավանդական և ժամանակակից մեթոդների զուգակցում,
- Աշակերտների և ծնողների հետ հետադարձ կապի ապահովում,
- Հեռավար ուսումնական գործընթացի կազմակերպում և կառավարում,
- Կրթության ամբողջականության և հավասարության ապահովում,
- Գործընկեր դպրոցների և նոր մասնագետների ներգրավում,
- Ճկուն ժամանակացույցով անհատական ուսումնական պլանի մշակում,
- Ուսուցման ձևաչափի, կրթական գործիքակազմի ընտրության իրականացում,
- Հատազոտական աշխատանքի շարունակականության ապահովում:

Ակնկալվող արդյունքներ

Սույն հետազոտական աշխատանքի արդյունքում նախատեսում ենք ձևավորել այնպիսի հմտություններ, որոնք կիրառելը հնարավորություն կտան հետագայում ստեղծել օնլայն դպրոցի մոդել ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու Ակադեմիական վարժարան» ՊՈԱԿ-ում: Հաջողության դեպքում փորձը կարող ենք տարածել այլ դպրոցների և ուսումնական հաստատությունների վրա:

Սույն հետազոտական աշխատանքը արդյունավետ միջոց է այնպիսի հմտություններ ձևավորելու համար, որոնց արդյունքում ստեղծելու է բոլորի համար կրթության հավասար հնարավորություն՝ անկախ բնակության վայրից, առողջական, սոցիալական և ֆինանսական վիճակից:

Գլուխ առաջին: Առցանց դպրոց բացելու հմտությունների ձևավորման անհրաժեշտությունը

Մենք առանձնացրել ենք նաև այն մեթոդները, որոնց շնորհիվ կարելի է ընտրել օնլայն դպրոցի շահառուներին:

Այսպես, օնլայն դպրոցի շահառուները կարող են լինել օրինակ՝

- Հենաշարժողական ապարատի կամ տեսողական ու լսողական խնդիրներ ունեցող երեխաները, ովքեր նախկինում խուսափել են հաճախել հանրակրթական դպրոց, իսկ այժմ ունենալու են լիարժեք կրթություն ստանալու հիանալի հնարավորություն՝ զերծ մնալով ավելորդ սթրեսային իրավիճակներից,
- Սփյուռքում բնակվող մեր հայրենակիցները, ովքեր կարողանալու են առանց բարդությունների հաղորդակցվել հայկական մշակույթի, լեզվի հետ՝ ամրապնդելով կապը մայր հայրենիքի և ազգակիցների հետ,
- Սահմանամերձ, ճանապարհատրանսպորտային կարևոր ուղիներից կտրված, դատարկվող գյուղերի երեխաները, ովքեր անմասն չեն մնա համաշխարհային զարգացման գործընթացից շնորհիվ համացանցի ընձեռած լայն հնարավորությունների,
- Համավարակի պայմաններում առկա կրթությունից հրաժարված կամ մեկուսացած աշակերտները, ովքեր ևս կարող են դառնալ մեր թիմի մի մասը:
- Այն դպրոցները, որոնք ունեն մանկավարժների պակաս:

Ի դեպ, պատրաստվող կայքն ու աշխատանքային հարթակն ամբողջությամբ կարելի է համապատասխանեցնել համացանցային հասանելության միջազգային ստանդարտներին:

Համացանցային հասանելիություն նշանակում է կայքերի ու գործիքների նախագծման և ստեղծման այնպիսի մեթոդների կիրառում, որոնք սահմանափակ կարողություններով մարդկանց հնարավորություն կտան ամբողջությամբ օգտագործել դրանք:

Համացանցային հասանելիությունը ներառում է հաշմանդամության հետևյալ տեսակները՝

- Լսողական, Խոսակցական, Ճանաչողական, Հենաշարժողական, Տեսողական:

Համացանցային հասանելիությունը նաև օգտակար է հաշմանդամություն չունեցող մարդկանց համար, օրինակ.

- մարդկանց, ովքեր օգտագործում են բջջային հեռախոսներ, խելացի ժամացույցներ, խելացի հեռուստացույցներ և փոքր էկրաններով այլ սարքեր,
- «ժամանակավոր հաշմանդամություն» ունեցող մարդկանց, ինչպիսիք են ձեռքի կոտրվածքը կամ ակնոցի կորուստը,
- մարդկանց, ովքեր ունեն «իրավիճակային սահմանափակումներ», օրինակ՝ արևի պայծառ լույսի ներքո կամ այնպիսի միջավայրում, որտեղ նրանք չեն կարող լսել ձայնը,
- մարդկանց, ովքեր օգտագործում են դանդաղ ինտերնետային կապ, կամ ունեն սահմանափակ կամ թանկարժեք թողունակություն, ինչպիսիք են հեռավոր գյուղական վայրերը։

Հասանելիության խնդիրները լուծելու համար կիրառվելու են հետևյալ մեթոդները, սակայն չեն սահմանափակվելու դրանցով՝

- Նկարների համար ալտերնատիվ տեքստերի կիրառում, որպեսզի տեսողական խնդիրներով մարդկանց կողմից օգտագործվող էկրանի պարունակությունը կարդացող ծրագրերը կարողանան ճիշտ վերծանել,
- Ստեղնաշարի միջոցով էջի կառավարում, որպեսզի հենաշարժողական ապարատի խնդիրներով մարդիկ առանց մկնիկի կիրառության կարողանան օգտվել կայքից
- Տեսաձայնային ֆայլերին կից տեքստային ինֆորմացիայի տրամադրում՝ լսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար,
- Գունային հատուկ երանգների ընտրություն,
- և այլն։

Օնլայն դպրոցի շրջանակներում կարելի է ապահովել այլընտրանքային կրթություն՝ ներառելով իր բովանդակային բաղադրիչի մեջ մեծ պահանջարկ ունեցող դասընթացներ, այդ թվում՝

- Էթիկետի կանոններ,
- Կիբերանվտանգություն,
- Հռետորական արվեստ, հաղորդակցման հմտություններ,

- Ազգային պարեր,
- Ծրագրավորման հիմունքներ,
- Նկարչություն,
- Համակարգչային գրաֆիկա, դիզայն,
- Օտար լեզուներ /գրավոր, բանավոր խոսակցական,
- Հագուստի մոդելավորում:

Բաժիններից մեկը կարող է նախատեսվել առարկայական պարապմունքների համար (առանց տարիքային սահմանափակման, խմբակային և անհատական): Աշխատանքների իրականացման համար կարելի է ներգրավել փորձառու և գիտակ մասնագետների, ովքեր պատրաստ են նախապատրաստել աշակերտներին պետական ավարտական և միասնական քննություններին, աջակցել ուսման մեջ թերացողներին և լրացուցիչ օգնության կարիք ունեցողներին:

Ինչպես արդեն նշվել է, կարելի է հատուկ բաժին է հատկացնել նաև Սփյուռքի մեր հայրենակիցների համար:

Ուսուցանվելու են հանրակրթական առարկաները՝ ՀՀ հանրակրթական պետական ծրագրով և չափորոշչով սահմանված պահանջներին համապատասխան: Դպրոց դիմելու և ընդունվելու կարգը պետք է լինի հնարավորինս պարզեցված, առանց ավելորդ թղթատարության (այս հատվածն իրագործվելու է միայն պետական կրթական լիցենզավորման ողջ ընթացակարգն հաջողությամբ անցնելուց հետո):

Ինչպես նշեցինք, օնլայն հարթակում կարելի է նաև իրկանացնել ռոբոտաշինության դասընթացներ,: Այդ աշխատանքերի իրականացման ընթացքում ակնկալվող կարևորագույն արդյունքներն են.

- Տեխնոլոգիական կրթության խթանումը Հայաստանում,
- Տարածաշրջանային զարգացում, քանի որ ծրագիրն իրականացվում է ամբողջ հանրապետության տարածքում,
- Ձեռնարկատիրական մշակույթի սերմանում,
- Հավելյալ տնտեսական ակտիվության ստեղծումը ինչպես բարձր տեխնոլոգիաների, այնպես էլ հարակից ոլորտներում
- Դպրոցական համակարգ-աշխատաշուկա-բուհական համակարգ-աշխատաշուկա կապի ստեղծում և հզորացում,

- Դեմոգրաֆիական վիճակի բարելավում՝ ֆինանսական խթանների տրամադրման շնորհիվ վերարտադրողական տարիքի նվազեցման միջոցով և արտագաղթի զսպման միջոցով,
- Ոլորտի ընկերությունների և կրթական համակարգի միջև կապ,
- Նոր որակի առաջնորդների և ձեռներեցների կրիտիկական զանգվածի ձևավորում:

Տեխնոլոգիական կրթության զարգացման ուղղությամբ նմանատիպ լայնամասշտաբ նախաձեռնության իրականացումը կբերի ռոբոտաշինության ասպարեզում Հայաստանի դիրքերի էական բարձրացմանը՝ որպես գիտելիքահեն երկիր:

Առցանց կրթությունը օր օրի դառնում է առավել պահանջված, քանի որ ավելի հարմար է, խնայում է ժամանակ և նույնիսկ օգտակար է բնությանը, սակայն **առցանց** կրթության զարգացմանը զուգընթաց նաև ստեղծվում են բազմաքանակ դպրոցներ, և առաջանում է ընտրության խնդիր:

Առցանց դպրոցները տարբերվում են միմյանցից **մեթոդաբանությամբ, տեխնիկական հագեցվածությամբ և ծրագրերով:**

Մասնագիտացված դպրոցներն ունեն դասավանդման սեփական մեթոդաբանությունը և ծրագրերը:

Տեխնիկական հագեցվածություն Այստեղ կարևոր է հաշվի առնել, որ դպրոցին գրանցման, վճարման և անհրաժեշտ այլ գործընթացների ընթացքում դուք փոխանցում եք Ձեր անձնական տվյալները, այդ պատճառով նախընտրելի է, որ դասերի կազմակերպման համար չօգտագործվեն ձեզ անծանոթ տեխնիկական գործիքներ, չպաշտպանված կամ թույլ պաշտպանված կայքեր:

Դասի որակի համար նաև խիստ կարևոր են համացանցի (ինտերնետի) արագությունը, պատկերի և ձայնի մաքրությունը:

Անվճար դասի հնարավորություն

Մասնագիտացված առցանց դպրոցը հնարավորություն է տալիս, որ նախքան ամբողջ կուրս գնելը ուսանողը մանրամասն ճանաչի դպրոցը, ծանոթանա մասնագետի հետ, որն իրեն դասավանդելու է, համոզվի դասի և՛ բովանդակային, և՛ տեխնիկական մասերի որակյալ լինելու մեջ:

Մի քանի տարի է, ինչ մեծ ժողովրդականություն է վայելում առցանց ուսուցման ֆորմատը: Եվ խոսքը միայն համալսարաններում կամ օնլայն դպրոցներում սովորելու մասին չէ: Կան մի շարք կայքեր, ալիքներ կամ պարզապես յութուբյան էջեր, որտեղ անվճար կամ բաժանորդագրության չնչին գումարով հնարավոր է սովորել բացառապես ամեն ինչ՝ ծրագրավորման լեզուներից մինչև խոհարարություն: :

Լրիվ կրթություն ստանալու կամ նոր հմտություններ սովորելու համար այլևս անհրաժեշտ չէ անձամբ համալսարան գնալ կամ դասընթացներ անցնել: Դուք կարող եք ընտրել հեռավար ուսուցման և դեմ առ դեմ ուսուցման միջև: Օֆլայն ձևաչափն ավելի ծանոթ է թվում, իսկ առցանց ուսուցումը ժամանակակից և հարմար է:

Ո՞ւմ համար է հարմար էլեկտրոնային ուսուցումը:Կրթությունը նախադպրոցական, դպրոցական, բարձրագույն և լրացուցիչ մասնագիտական է: Երեխաները կարող են հեռակա կարգով պատրաստվել դպրոցին, իսկ մեծահասակները կարող են ստանալ լիարժեք կրթություն և սովորել նոր մասնագիտություններ: Այժմ ավելի հեշտ է, քան երբևէ, օրինակ՝ կարող եք գրանցվել հեղինակավոր համալսարանում սովորելու ծրագրին, անցնել մինչև վերջ և ստանալ կրթության վկայական:Փորձագետների համար առցանց ուսուցումը հիանալի հնարավորություն է կիսելու իրենց գիտելիքները անսահմանափակ լսարանի հետ և դրամայնացնելու այն: Մասնագետը ստեղծում է վերապատրաստման ծրագիր կամ բացում առցանց դպրոց և տարածում այն համացանցում:Ընկերություններն օգտագործում են հեռավար ուսուցում՝ ընկերությունում իրենց աշխատակիցների մասնագիտական հմտությունները բարելավելու համար: Նրանք արագորեն ներկայացնում են նոր աշխատակիցների պաշտոնը և պահպանում են եղածների որակավորումը:

Հեռավար ուսուցման կազմակերպումն ունի իր առանձնահատկությունները: Այն տարբերվում է փորձագետի և ուսանողների դեմ առ դեմ հանդիպումներից:

Սահմանափակ թվով ուսանողներ կարող են հավաքվել դեմ առ դեմ սեմինարի կամ դասընթացի համար: Դա պայմանավորված է ցանկացողների տարածքային հեռավորությամբ և ցանկացած տարածքի սահմանափակ հնարավորություններով: Համացանցն ընդլայնում է հնարավորությունները և թույլ է տալիս հրավիրել ցանկացած թվով ուսանողների տարբեր քաղաքներից և երկրներից: Իսկ եթե անցկացնում եք կորպորատիվ թրեյնինգ, ապա կարող եք միաժամանակ պատրաստել տարբեր ճյուղերի

աշխատակիցներ: Հաճախորդների մեծ բազայի առկայությունը թույլ է տալիս արագ ուղղահայաց զարգացում՝ նոր ուղղությունների մեկնարկ:

Առցանց ուսուցում կազմակերպելիս կարիք չկա վճարել տարածքների վարձակալության և կազմակերպչական այլ ծախսեր: Լավագույն բանախոսներին հրավիրելու կամ մի քանի մարզերում միջոցառում անցկացնելու համար դուք չեք վճարում ճանապարհորդության և բնակության համար:

Առցանց ուսուցման համակարգերը թույլ են տալիս ավտոմատացնել սովորական գործընթացները: Օրինակ, հարթակն ավտոմատ կերպով վարում է ուսանողների տվյալների բազա, ստեղծում է հաշվետվություններ նրանց առաջընթացի մասին, ստուգում է թեստային առաջադրանքները և ուսանողներին հիշեցումներ է ուղարկում նյութն ուսումնասիրելու համար: Ուսուցիչը կարող է օգտվել առցանց ուսուցման տարբեր գործիքներից: Օրինակ՝ տեսանյութեր, էկրանի փոխանակում, շնորհանդեսներ, չաթ և ուսուցման ինտերակտիվ մեթոդներ: Սա թույլ է տալիս դիվերսիֆիկացնել դասերը և համոզիչ կերպով փոխանցել բարդ նյութը:

Հեռավար ուսուցման հարթակները թույլ են տալիս վերահսկել ուսանողների առաջընթացը: Օրինակ՝ ուսուցիչը կարող է ցանկացած պահի դիտել աշակերտի վիճակագրությունը և գնահատականները՝ իրենց ավարտած դասերի համար:

Աշակերտը և ուսուցիչը կարող են ընտրել ցանկացած հարմար ժամ դասերի համար: Իսկ եթե թրեյնինգն ասինխրոն է, այսինքն՝ չի ներառում իրական ժամանակի դասեր, ուսուցիչը ցանկացած պահի կարող է պատրաստել նյութը և ստուգել սովորողների պատասխանները:

Օնլայն ուսուցումը դպրոցներում կամ ուսումնական կենտրոններում մի շարք առավելություններ ունի հատկապես երեխաների համար:

1. Առցանց ուսուցումն իրական ընտրություն է ապահովում

Այժմ կարևոր չէ, թե որտեղ եք գտնվում աշխարհագրորեն, կարող եք ընտրել ցանկացած դպրոց և ոչ միայն՝ ձեր երկրում, և անել այն, ինչի մասին նույնիսկ չեք էլ երազել: Հնարավորությունների անսովոր պատուհան է բացվում: Իհարկե, սա առաջին հերթին վերաբերում է լրացուցիչ կրթությանը, բայց միջնակարգ կրթության մեջ կա նաև ընտանեկան կրթության անցնելու միտում, ինչը հնարավորություն է տալիս ազատ ժամանակ հեռավար սովորել բոլորովին այլ դպրոցում:

2. Ոչ մի տեղ գնալու կարիք չկա

Իսկ դա նշանակում է ավելի շատ ժամանակ պրակտիկայի համար: Դա նաև նշանակում

է, որ դուք չպետք է անհանգստանաք, թե ով է ձեր երեխային տանում դասի կամ ինչպես է նա այնտեղ հասնում: Հարմարեցված կրթական հարթակներ Առցանց ուսուցման լուրջ մատակարարները ձեռք են բերել իրենց հարմարեցված (իրենց ծրագրերի և հետաքրքրությունների համար նախատեսված) կրթական հարթակներ և այլևս դասեր չեն առաջարկում Skype-ով և Zoom-ով:
Ի՞նչ է սա նշանակում ուսանողների համար:
Նախ՝ «կենդանի» դասեր անցկացնելու հնարավորություն:
Երկրորդ՝ դասերի միջև ինքնուրույն աշխատանքի համար կառուցվածքային նյութ տեղադրել: «Շատերն ասում են, որ ոչ մի առցանց դաս չի կարող համեմատվել ուսուցչի հետ իրական դասի հետ: Սա, իհարկե, ոչ ոք չի ժխտում: Օնլայն ուսուցումը կարող է կազմակերպվել լրացուցիչ պարապմունքների համար: Բացի այդ, վիրուսների դարաշրջանում, դասերը երբեմն ստիպված են դառնում օնլայն;
«Ճիշտ» վիրտուալ դասարանը ուսուցչին հնարավորություն է տալիս օգտագործել նույն գործիքները, ինչ դասարանում: Բոլորը միացնում են տեսախցիկները և խոսափողները, և բոլորը տեսնում և լսում են բոլորին: Իսկ կարգը խախտողի ձայնը կարելի է պարզապես անջատել, որպեսզի այն չխանգարի, ինչը հնարավոր չէ անել դասարանում:
Ինչպես սովորական դասի ժամանակ, երեխաները կարող են լսել ձայնագրություն, դիտել տեսանյութ և նույնիսկ միասին նկարել ընդհանուր նկար, գրել գրատախտակին և, ինչը հնարավոր չէ անել սովորական դասարանում առանց թանկարժեք հատուկ սարքավորումների՝ կատարել առաջադրանքը միասին: Համագործակցության գործիքները թույլ են տալիս միասին աշխատել ոչ միայն դասարանում, այլև կատարել երկարաժամկետ խմբային նախագծեր: Մասնագիտացված հարթակները հնարավորություն են տալիս երեխաներին բաժանել զույգերի կամ խմբերի՝ կոնկրետ առաջադրանքի վրա աշխատելու համար: Եվ սա շատ ավելի արդյունավետ է, քան դասարանում, քանի որ յուրաքանչյուր առանձին սենյակում երեխաները շփվում են միայն միմյանց հետ, և նրանց չի խանգարում մյուսների խոսակցության ձայնը: Իսկ ուսուցիչը կարող է գնալ ցանկացած զույգի մոտ և օգնել կամ մշակել միայն նրանց սխալները:
5. Ի՞նչ է ապահովում հարթակը:
Հարթակը թույլ է տալիս ծնողներին տեսնել, թե ինչ է եղել դասին (շատ դպրոցներ

կիսում են աշխատանքային ծրագրերը ծնողների հետ);

ուսուցիչը ֆորումում կամ զրուցում կգրի, թե ինչ է տրվում տանը,

վարժությունները, որոնք տեղադրված են հարթակում, անմիջապես թույլ կտան տեսնել, թե արդյո՞ք

կան սխալներ, և տեսնել ճիշտ պատասխանը,

հարթակի վրա նյութը հավաքվում է, որպես կանոն, բաժիններով և դասերով, դուք կարող եք կրկնել այն, ինչ դժվարություններ ունեք, և դա անել հարմար ժամանակ,

դուք կարող եք վերահսկել ձեր երեխայի առաջընթացը, տեսնել նրա գնահատականները թեստերի համար, ստանալ հետադարձ կապ ուսուցիչներից,

օգտագործելով չաթը և ֆորումը՝ կարող եք ուսուցչին հարց տալ, երբ ունեք այն, նույնիսկ, եթե գիշեր է, և չվախենաք արթնացնել ուսուցչին: Զբաղված ծնողների համար սա այն է, ինչ ձեզ հարկավոր է:

Ինչպես նշեցինք, առցանց տարբերակով կարելի է սովորել ոչ միայն դպրոցներում և ուսումնական կենտրոններում, այլև հմտություններ ձեռք բերել տարբեր ոլորտներում:

«Օնլայն ուսուցումն այլևս մեր կյանքի մի մասն է, այն եկել է փոխելու առցանց կրթության որակը, հնարավորություններն ու դերը հայկական իրականության մեջ և ոչ միայն:Մարդիկ, ովքեր յուրաքանչյուրի համար հնարավորություն են ստեղծել՝ ունենալու օնլայն ուսուցման պրոֆեսիոնալ դպրոց րոպեների ընթացքում:

Օնլայն ուսուցման պահանջարկն օր օրի ավելի է մեծանում: Պատճա՞ռը: Դրանք շատ են: Նախ, մարդիկ խնայում են իրենց ժամանակը: Մեր օրերում ապրող մարդը չափից դուրս զբաղված է աշխատանքից հետո դասընթացների վազելու համար: Ոմանց մոտ ստացվում է, մյուսները պարզապես չեն հասցնում: Դա նաև ծախսատար է: Փոխարենը՝ նրանք իրենց կրթության ծարավը հագեցնում են օնլայն կուրսերով, որոնք ոչնչով չեն զիջում սովորական դասընթացներին:

Գլուխ երկրորդ : Առցանց դպրոցի իրականացման պլանը և կայքի բաժինները

Նախապատրաստական փուլում կարելի է կատարել առաջարկվելիք ծառայությունների ընտրություն և դասակարգում, նպատակների և խնդիրների հստակեցում, թիրախային խմբերի առանձնացում, ուսումնական ձևաչափի և թեմաների ընտրություն, կրթական գործիքակազմի առանձնացում: Հաջորդ փուլով որևէ ընկերության անմիջական աջակցությամբ կարելի է պատրաստել վեբ կայք:

Առցանց դպրոցի պետական գրանցումը կարելի է սկսել ավելի ուշ, որին անմիջապես հաջորդելու է պետական լիցենզավորում ստանալու համար քայլերի մեկնարկը: Կարելի է ծրագիրը փորձարկել նախ որևէ կրթական հաստատությունում , օրինակ՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու Ակադեմիական վարժարան» ՊՈԱԿ-ի աշակերտական հանրույթի համար ուսումնական տարվա սկզբին, իսկ հաջողության դեպքում՝ նաև այլ դպրոցներում և ուսումնական հաստատություններում: Հընթացս պետք է ընթանան տեսադասերի ինտենսիվ նկարահանումներ հրավիրված մասնագիտական խմբի կողմից, մշակվեն վեբինարների նյութեր, իրականացվեն թվային գրադարանի ստեղծման, թեստային առաջադրանքների կազմման աշխատանքներ:

Շարունակականության ապահովում

Քանի որ մեր տեսլականն է՝ ստեղծել ապագայի դպրոցի, հետևաբար հետազոտական աշխատանքի շարունակականության ապահովումը մեր ռազմավարության առաջնահերթություններից և գլխավոր խնդիրներից մեկն է: Ինչպես նշվեց, նախատեսվում է վերջնարդյունքում սույն նախագիծը վերածել ծրագրի և այն կյանքի կոչել նախապես ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու Ակադեմիական վարժարան» ՊՈԱԿ–ում: Հաջողված փորձի դեպքում նախատեսվում է ընդլայնել ծրագրի աշխարահագրությունը՝ ներառելով նոր կրթական հաստատություններ ու ավելի մեծ թվով մանկավարժներ, մեթոդիստներ: Ընդ որում, մեր առցանց դպրոցը բաց հարթակ է լինելու այն դպրոցների համար, ովքեր ունեն մանկավարժների պակաս:

«Դպրոց դպրոցում» կոչվող վեբ կայքում կարելի է առանձնացնել հետևյալ բաժինները՝

- **Այլընտրանքային ուսուցում՝** դպրոցական ծրագրից դուրս մնացած, բայց կյանքին շատ մոտ կանգնած դասընթացներ,
- **Հայրենիք-Սփյուռք կապեր՝** Սփյուռքում ապրող մեր հայրենակիցների համար նախատեսված հատուկ դասընթացներ հայոց լեզվից, հայ գրականությունից և հայոց պատմությունից
- **Հանրակրթական դպրոց՝** հանրակրթական առարկաներ I-XII դասարաններում սովորողների համար, իհարկե, պետական լիցենզավորում ստանալու դեպքում
- **Առարկայական՝ անհատական և խմբակային պարապմունքներ՝** պետական ավարտական և միասնական քննություններին նախապատրաստում, այլ տարիքային խմբերի երեխաների առարկայական գիտելիքների ամրապնդում

Եզրակացություն

Ի մի բերելով վերը կատարված քայլերը՝ կարող ենք եզրակացնել, որ սույն հետազոտական աշխատանքը նպատակ ունի.

- Ձևավորել օնլայն դպրոց ստեղծելու հմտություններ,
- Բարելավել մանկավարժների աշխատանքի որակը
- Պատշաճ պատասխանել կրթության հրամցրած նոր մարտահրավերներին
- Կիրառել «Հավասար կրթություն բոլորի համար» սկզբունքը,
- Ստեղծել կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման առավել հարմարավետ պայմաններ
- Տարածել մանկավարժական փորձ, գիտելիքներև մեթոդիկա
- Ներգրավել մարդկանց տարբեր խմբերի՝ անկախ տարիքից, բնակության վայրից, ֆիզիկական հնարավորություններից, սոցիալական պայմաններից և ֆինանսական վիճակից,
- Բարձրացնել աշակերտների ինքնուրույնությունը, աշխատանքի արդյունավետությունը
- Ներդնել մորագույն կրթական տեխնոլոգիաներ
- Կրճատել կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ ծախսերը,
- Զուգակցել կրթական ավանդական և ժամանակակից մեթոդները
- Ապահովել աշակերտների և ծնողների հետ հետադարձ կապ
- Կազմակերպել և կառավարել հեռավար ուսումնական գործընթացը
- Ապահովել կրթության ամբողջականության և հավասարության սկզբունքները,
- Ներգրավել գործընկեր դպրոցներ և նոր մասնագետներ
- Մշակել ճկուն ժամանակացույցով անհատական ուսումնական պլան
- Իրականացնել ուսուցման ձևաչափի, կրթական գործիքակազմի ընտրություն
- Ապահովել հետազոտական աշխատանքի շարունակականություն

Առավելություններ:

- թույլ է տալիս շարունակական հաղորդակցութուն աշակերտների և ուսուցչի միջև
- աշակերտները կարող են ղեկավարել իրենց ուսուցման օպտիմալ տեմպը

• աշակերտներն ընտրում են ուսուցման համար առավելագույն հարմար ժամանակ

• հետևողական դասավանդում և հետադարձ կապ

• ավելի խորաթափանց մտածողություն և քննարկումներ

• ներգրավվածության հնարավորություն բոլոր ուսանողների համար

Թերություններ/մարտահրավերներ:

• բովանդակությունը ֆիքսված է և ընթացքում փոփոխություն մտցնելը բարդ է

• ժամանակի հստակ կառավարումը բարդ է է

• աշակերտներին ներգրավվածությունը հնարավոր է ավելի բարդ լինի

Հնարավոր դասավանդման միջոցներ՝

• քննարկումներ

• դասախոսության գրառումներ

• ձայնագրված նյութեր (տրամադրեք նաև տեքստը)

• էլեկտրոնային նամակներ

• հայտարարություններ

• բլոգներ (ուսուցիչ, աշակերտներ)

Օգտագործված գրականության ցանկ

1. https://www.youtube.com/watch?v=aVfUebSCSG4- UTeach Armenia, Ինչպես բացել պրոֆեսիոնալ օնլայն դպրոց մեկ օրում:
2. https://www.ispring.ru/elearning-insights/kak-sozdat-onlayn-shkolu-s-nulya
3. https://skillspace.ru/blog/onlain-shkola-kak-otkryt-poshaghovaia-instruktsiia/
4. https://armath.am/hy/about
5. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 ՀՀ օրենքը Հանրակրթության մասին